ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՓՈԽԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայնագրի մասնակիցները, այսուհետ՝ Բարձր պայմանավորվող կողմեր,

ընդունելով հիդրոօդերեւութաբանական տեղեկության կանոնավոր ստացման եւ օգտագործման կարեւորությունը բնակչության անվտանգության, ժողովրդական տնտեսության արդյունավետ վարման եւ պաշտպանունակության ապահովման համար,

գիտակցելով բնակվելու անվտանգ բարենպաստ պայմանների ապահովման եւ ժամանակին տարերային աղետներից պաշտպանվելու պատասխանատվությունը,

նշելով, որ հիդրոօդերեւութաբանական գործընթացների զարգացումը հարաճուն է եւ պետական սահմաններ չի ճանաչում, իսկ հիդրոօդերեւութաբանական տվյալների ճիշտ մեկնաբանությունը պահանջում է վարչական կամ այլ օրինակ բաժանմանը չհամընկնող մեծ տարածքներից տեղեկության օգտագործում, գիտակցելով միջպետական նշանակություն եւ հետաքրքրություն ունեցող համաձայնեցված հիմնարար եւ կիրառական հետազոտությունների անցկացման անհրաժեշտությունը, ձգտելով հիդրոօդերեւութաբանական բնագավառում տեղեկության փոխանակման համաձայնեցված գործողությունների, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Բարձր պայմանավորվող կողմերը հիդրոօդերեւութաբանական տեղեկության ստացման եւ օգտագործման բնագավառում մշակում եւ անցկացնում են միասնական քաղաքականություն, ներառյալ դիտարկումների մեթոդաբանության եւ տեղեկության հավաքման ու տարածման տեխնոլոգիայի համաձայնեցված պահպանումը, հաշվի առնելով նախկին ԽՍՀ Միության նախկինում մշակված եւ կնքված միջազգային համաձայնագրերը:

ՀՈԴՎԱԾ 2

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են համաձայնեցված կարգով եւ ներդաշնակորեն ապահովել.

հիդրոօդերեւութաբանական տեղեկության կանոնավոր փոխանակում, այդ թվում տարերային աղետների ժամանակ,

հիդրոօդերեւութաբանական դիտարկումների համաձայնեցված մեթոդաբանություն,

հիդրոօդերեւութաբանական տեղեկատվության հավաքման եւ տարածման համաձայնեցված տեխնոլոգիա,

ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող գիտական հետազոտություններ (եղանակի երկարաժամկետ տեսություն, օդերեւութաբանական գործընթացների վրա ակտիվ ներգործության մեթոդների մշակում եւ այլն) եւ գլոբալ երեւույթների հետազոտություններ (կլիմայի փոփոխություն, օզոնային շերտի քայքայում եւ այլն),

զինված ուժերին հիդրոօդերեւութաբանական տեղեկություն ապահովելու կազմակերպում,

հիդրոօդերեւութաբանության բնագավառում կադրերի համատեղ պատրաստում,

միջազգային պարտավորությունների կատարում եւ Օդերեւութաբանության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցություն:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված դրույթների կատարման համար Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնեցին ստեղծել.

Հիդրոօդերեւութաբանության միջպետական խորհուրդ, որպես 2-րդ հոդվածում թվարկված գործունեության ուղղություններով գործառույթներ իրականացնող Անկախ Պետությունների Համագործակցության համակարգող ինստիտուտ,

Հիդրոօդերեւութաբանության միջպետական խորհուրդը բաղկացած է Համաձայնագրի

մասնակից պետությունների հիդրոօդերեւութաբանական ծառայությունների (կոմիտեների, վարչությունների) ղեկավարներից եւ գործում է հավասարության հիմքով:

Որպես հիդրոօդերեւութաբանության Միջպետական խորհրդի աշխատանքային մարմին, դրան կից ստեղծել մշտական հիմքերով գործող Գործադիր կոմիտե:

Հիդրոօդերեւութաբանության միջպետական խորհրդի եւ դրա Գործադիր կոմիտեի լիազորությունները, դրանց ֆինանսավորման եւ աշխատանքի կարգը ամրագրվում են Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող Արձանագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 4

Մասնակցությունը սույն Համաձայնագրին չի շոշափում Բարձր պայմանավորվող կողմերի իրավունքները եւ պարտավորությունները վաղօրոք կնքված պայմանագրերով, ինչպես նաեւ այն պայմանագրերով, որոնք կարող են կնքվել ապագայում հիդրոօդերեւութաբանության այն սկզբունքների զարգացման ապահովման համար, որոնց վրա հիմնված է սույն Համաձայնագիրը:

ՀՈԴՎԱԾ 5

Բարձր պայմանավորվող կողմերը համատեղ մշակում են սույն Համաձայնագրի դրույթների խախտմանը վերաբերող պատասխանատվության կարգը, կանոնները եւ գործընթացները:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Բարձր պայմանավորվող կողմերի լիազորների կողմից ստորագրելու պահից:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրը բաց է ցանկացած այլ՝ սույն Համաձայնագրի նպատակներին եւ խնդիրներին հասնելու շահագրգիռ պետության կողմից միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 8

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչեւ 5 տարին լրանալը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել սույն Համաձայնագրում մասնակցությունից՝ ավանդապահին գրավոր ծանուցելու միջոցով: Դուրս գալը տվյալ Պայմանավորվող կողմի համար ուժի մեջ է մտնում ավանդապահին դուրս գալու մասին ծանուցմանը հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ից:

ՀՈԴՎԱԾ 9

Կատարված է Մոսկվա քաղաքում 1992 թվականի փետրվարի 8-ին, մեկ բնօրինակով, ադրբեջաներեն, հայերեն, բելառուսերեն, ղազախերեն, ղրղզերեն, մոլդովերեն, ռուսերեն, տաջիկերեն, թուրքմեներեն, ուզբեկերեն եւ ուկրաիներեն:

Բոլոր տեքստերը հավասարազոր են, բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը դրա հավաստված պատճենները կուղարկի սույն Համաձայնագրի մասնակից պետություններին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի փետրվարի 8-ից: